

նախօսից, գուցէ հայրապետս շփոթած է Ս. Ազնեսի յիշատակին հետ, ուր Պատարագը դեռ չաւարտած՝ երկու սպիտակ ողջ գառնուկներ կը դրուին ս. Սեղանին վրայ ու կ'օրհնուին, յիշեցնելով մեր նման մէկ սովորութիւնը (աստ, 349-50), եւ յետոյ անոնց բրդէն կը շինուին պալիւռնները:

4. — Օրնուարիւն: — Յիշուած Արշարունիէն (աստ, 369) եւ ուրիշներէ, միւս մատաղներու կանոններէն շատ աւելի համառօտ է Շնորհալոյն օրով, որ կը պատուիրէ օրհնել աղը տեանագրութեամբ, եւ ըսելով « զսաղմոսն եւ զաղօթսն՝ որ կարգեալն է », եւ կերցնելով գառին (Ընդհ. 160): Այս՝ հին մաշտոցին աղօրհնէից ձեւն է, կազմուած մէկ սաղմոսէ եւ մէկ աղօթքէ՝ զոր տեսանք (աստ, 347):

Բայց այդքանը չի գոհացներ մեր միջին դարու եկեղեցականները, որոնք Շնորհալիէն վերջ կը հնարեն գառնօրհնէից յատուկ ձեւեր: Վենետիոյ գրչ. մաշտոցներէն 1345ի օրինակը՝ գրուած ի Սիս, ունի « Աւրհնութիւն գառինն ի նոյն (զատկի) կիրակէին, եւ բաշխեն ժողովրդեան ». և կը կազմուի հետեւեալ լոկ ու կարճ աղօթքէն. « Տր. մեր, որ ի պասքս աւրհնեալ յագեցաք երկնային կերակրով երկնա(յ)ին սեղանոյս, ընծայեմք քեզ զմիս